

© Եվրոպայի խորհուրդ/ Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 2013: Սույն թարգմանությունն իրականացվել է Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հավատարմագրային ֆոնդի (www.coe.int/humanrightstrustfund) աջակցությամբ: Այն որևէ կերպ չի պարտավորեցնում Դատարանին: Ավելին իմանալու համար ծանոթացեք սույն փաստաթղթի վերջում ներկայացված հեղինակային իրավունքի վերաբերյալ նշումներին:

© Council of Europe/European Court of Human Rights, 2013. This translation was commissioned with the support of the Human Rights Trust Fund of the Council of Europe (www.coe.int/humanrightstrustfund). It does not bind the Court. For further information see the full copyright indication at the end of this document.

© Conseil de l'Europe/Cour européenne des droits de l'homme, 2013. La présente traduction a été effectuée avec le soutien du Fonds fiduciaire pour les droits de l'homme du Conseil de l'Europe (www.coe.int/humanrightstrustfund). Elle ne lie pas la Cour. Pour plus de renseignements veuillez lire l'indication de copyright/droits d'auteur à la fin du présent document.

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային տեղեկատու թիվ 108

2008թ. մայիս

Petrov-ն ընդդեմ Բուլղարիայի - 15197/02

Վճիռ 22.05.2008թ. [Բաժանմունք V]

Հոդված 14

Խտրականության արգելում

Ամուսնացած չլինելու հիմքով դատապարտյալին իր զուգընկերուհուն զանգահարելու թույլտվության տրամադրման մերժում. *խախտում*

Հոդված 8

Հոդված 8-1

Նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք

Դատապարտյալի ամբողջ նամակագրության պարբերական վերահսկողություն. *խախտում*

Փաստեր. 2001-2003թթ. ընթացքում դիմումատուն իր պատիժն է կրել Lovech բանտում: Ազատազրկման ընթացքում նրան չի թույլատրվել կնքված ծրարով նամակներ փոխանցել իր փաստաբանին, որը ներկայացնում էր վերջինիս շահերը քննարկման փուլում գտնվող ներպետական վարույթներում և Դատարանում: Նրա նամակները պարբերաբար բացվել և

ստուգվել են բանտի ղեկավարության կողմից: Բացի այդ, եթե ամուսնացած դատապարտյալներն իրավունք են ունեցել առանձին հեռախոսային խցիկից ամիսը երկու անգամ զանգահարել իրենց կանանց, դիմումատուն, ամուսնացած չլինելու պատճառով, որոշ ժամանակով զրկված է եղել իր երեխայի մորը զանգահարելու հնարավորությունից, որի հետ ապրել է մոտ չորս տարի:

Իրավունք՝ Հոդված 8. Դիմումատուն բողոքում էր, որ իր նամակագրությունը վերահսկվել է, որի մեջ է մտնում նաև իր փաստաբանի հետ նամակագրությունը: Վերահսկողության իրականացումը նախատեսված է եղել ներպետական օրենսդրությամբ, որի համաձայն դատապարտյալների ամբողջ նամակագրությունը պետք է վերահսկվի՝ անկախ նրանից, թե ում է հասցեագրված նամակը: Բացի այդ, նորմատիվային այդ ակտերում սահմանված չի եղել նման վերահսկողության իրականացումը կարգավորող որևէ կանոն և ոչ էլ տեղական մարմիններից է պահանջվել ներկայացնել դրա իրականացնելու պատճառները: Չնայած այս տիրույթում գոյություն ունեցող հայեցողության որոշակի շրջանակի և նման միջոցի անհրաժեշտ լինելու վերաբերյալ պետական մարմինների կողմից որևէ փաստարկի բացակայությանը, դիմումատուի ամբողջ նամակագրության վերահսկողությունը չի համապատասխանել սոցիալական ծայրահեղ կարիքին և համաչափ չէր հետապնդվող օրինական նպատակին:

Եզրակացություն. խախտում (միաձայն):

Հոդված 14՝ Հոդված 8-ի հետ համակցությամբ. Դիմումատուն բողոքում էր նաև, որ ի տարբերություն ամուսնացած դատապարտյալների, իրեն չի թույլատրվել բանտում տեղակայված հեռախոսից զանգահարել իր զուգընկերուհուն: Չնայած ամուսնական զույգերի իրավական կարգավիճակին ներկայացվող տարբերություններին, ինչպես նաև ընտանիքի ինստիտուտի ընդհանուր գաղափարի ընկալմանը, դիմումատուն և նրա զուգընկերուհին երկարատև հարաբերությունների մեջ են եղել միմյանց հետ և համատեղ երեխա են ունեցել: Հետևաբար, ըստ էության նա ունեցել է նույն կարգավիճակը, ինչ բոլոր ամուսնացած դատապարտյալները: Ինչևէ, ո՛չ տեղական մարմինները և ո՛չ էլ կառավարությունը չեն ներկայացրել որևէ օբյեկտիվ և ողջամիտ հիմնավորում՝ ամուսնացած դատապարտյալների համեմատությամբ դիմումատուի նկատմամբ ցուցաբերված տարբերակված մոտեցումը պատճառաբանելու համար: Չնայած պետության ունեցած հայեցողության շրջանակին՝ Դատարանը ընդունելի չի համարում այն, որ ընտանիք ունեցող ամուսնացած և չամուսնացած դատապարտյալները պետք է արժանանան անհավասար վերաբերմունքի, երբ հարցը վերաբերում է ազատագրվման մեջ գտնվելու ընթացքում ընտանեկան կապերը պահպանելուն:

Եզրակացություն. խախտում (միաձայն):

Հոդված 41. 4,000 եվրո (EUR)՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

© Council of Europe/European Court of Human Rights
This summary by the Registry does not bind the Court.

Եվրոպայի խորհուրդ/Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Դատարանի քարտուղարության այս ամփոփումը պարտադիր չէ Դատարանի համար

Սեղմեք այստեղ [Նախադեպային տեղեկատվությունների համար](#)

© Եվրոպայի խորհուրդ/ Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 2013

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պաշտոնական լեզուներն են ֆրանսերենը և անգլերենը: Սույն թարգմանությունն իրականացվել է Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հավատարմագրային ֆոնդի (www.coe.int/humanrightstrustfund) աջակցությամբ: Այն որևէ կերպ չի պարտավորեցնում Դատարանին, որը պատասխանատու չէ թարգմանության որակի համար: Այն կարելի է բեռնել HUDOC-ից՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի տվյալների բազայից (<http://hudoc.echr.coe.int>), կամ տվյալների ցանկացած այլ բազայից, որին HUDOC-ը տրամադրել է փաստաթուղթը: Այն կարող է վերաթողարկվել ոչ առևտրային նպատակներով՝ պայմանով, որ գործի անվանումը ներկայացվի ամբողջական և ուղեկցվի վերը նշված հեղինակային իրավունքի նշումներով, ինչպես նաև Մարդու իրավունքների հավատարմագրային ֆոնդին հղումով: Առևտրային նպատակներով սույն թարգմանությունը մասնակիորեն կամ ամբողջապես օգտագործելու դեպքում, հարկ է այդ մասին տեղեկացնել հետևյալ հասցեով՝ publishing@echr.coe.int

© Council of Europe/European Court of Human Rights, 2013

The official languages of the European Court of Human Rights are English and French. This translation was commissioned with the support of the Human Rights Trust Fund of the Council of Europe (www.coe.int/humanrightstrustfund). It does not bind the Court, nor does the Court take any responsibility for the quality thereof. It may be downloaded from the HUDOC case-law database of the European Court of Human Rights (<http://hudoc.echr.coe.int>) or from any other database with which the Court has shared it. It may be reproduced for non-commercial purposes on condition that the full title of the case is cited, together with the above copyright indication and reference to the Human Rights Trust Fund. If it is intended to use any part of this translation for commercial purposes, please contact publishing@echr.coe.int.

©Conseil de l'Europe/Cour européenne des droits de l'homme, 2013

Les langues officielles de la Cour européenne des droits de l'homme sont le français et l'anglais. La présente traduction a été effectuée avec le soutien du Fonds fiduciaire pour les droits de l'homme du Conseil de l'Europe (www.coe.int/humanrightstrustfund). Elle ne lie pas la Cour, et celle-ci décline toute responsabilité quant à sa qualité. Elle peut être téléchargée à partir de HUDOC, la base de jurisprudence de la Cour européenne des droits de l'homme (<http://hudoc.echr.coe.int>), ou

de toute autre base de données à laquelle HUDOC l'a communiquée. Elle peut être reproduite à des fins non commerciales, sous réserve que le titre de l'affaire soit cité en entier et s'accompagne de l'indication de copyright ci-dessus ainsi que de la référence au Fonds fiduciaire pour les droits de l'homme. Toute personne souhaitant se servir de tout ou partie de la présente traduction à des fins commerciales est invitée à le signaler à l'adresse suivante : publishing@echr.coe.int.